

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՍ

...»»»...

(Տես յ'էջ 106)

ԻՂ

Նոյի գերեզմանը. — վաճառանոց. — Նախաձառ ի դաշտավայրի. — Աւարատոյ
բաշտանք. — Ռահիմ-խան :



Առիճեմեհի՝ պարտաւորիչ այցելուութիւններէն մէկն՝ Նոյի գերեզմանին է, հռչականուն ուխտատեղւոյն : Անշնան կերպարանք ունեցող ստորեկրկնայ մատուռ մ'է, որոյ այս առունն կը տրուի. ութանկիւնի կամարակապ սրահ մը, մանր աղիւններով կառուցուած, ատենով նոյն տեղւոյն վրայ շինուած եկեղեցւոյն գետնափորն անշուշտ : Մէջտեղի միակ սիւնը կը վերջընէ կամարը, և ըստ հայկական աւանդութեան՝ այդ սեան տակ կը հանգչին ոսկերջ Նոյ նահապետի : Արդ սպիտակացուցուած ու բառած որմնոց վրայ նկարագրուած են ինքնագիր անուանք բազմաթիւ այցելուաց գերեզմանին...

Առաջ շարքուն մէջ է ընդհանրապէս տխրատարաց յաճախութիւնը², յորում սովոր

1. Վաղաքին Նարապիւն կողմն նշանաւոր է Եփեմ կամ Դաւթ Աթաբէկից, արտնկին կամարով և երկու կողմն նուրբ աշտարակներով կամ փորաներով, ապակեբուռն աղիւսով դրուագեալ և գրանդեաց վրայ արաբացի խաչքար տառերով գրուած է :

ԶԳՈՆ ԵՒ ԱՌԻԱՐ ԵՒ ՎՍԵՄԱԿԱՆ ԱՐՔԱՌՅԵ ԵՒ ԱԹԱԲԵԿ ԷՊԻՈՒՃԱՅԱՐ ՄՈՒՆԱՄԱՐԵՍ ՈՐԻԻ ԷԼՏԱՌԻԶ ԱԹԱԲԵԿԻ ԶՈՐՈՅ ԱՍՏՈՒԱՅ ԼՍԻԻԱՒԻՈՐԵՍԻՑԻ ԶԳԵՐԵԶՄԱՆ : ՍԻՆԻՍ ՏԻՆԻՑ 301-Յ : Կայ ուրիշ արանանագրութիւն այլ, բայց մեզ զանց կ'ընենք յիշել :

2. Թեպէտէ Շանար կը համարի թէ ուխտաւորք ընդհանրապէս Առաջ շարքուն կը յաճախեն Նոյի գերեզմանին, սակայն այս ալ զիստալու է, որ միշտ անապական չուն ուխտաւորք՝ այլ և այլ ազգերէ և կրօնքներէ, ինչպէս, քրիստոնեայք, իրնայք և մանմահականք և առաւել լայն մեր ազգայինք, որոնք անոյշ խունկերով և լայն տեղերով կ'երթան իրենց յարգանքն ընկելու Նահա-

նէն Հայք գալ ի մեծարել զնշխարո նահապետին, և ապա մանր քարեր կը փակցրնեն մատրան կամարին վրայ, հաւատալով որ եթէ յիրաւի միանան որմնոց վրայ՝ տարւոյն մէջ իրենց ամէն փափաք պիտի կատարուին :

Նոյայ յիշատակարան գերեզմանավայր՝ հին Նախիճեանէն ոչ հեռի հողակոյտի մը վրայ է : Այդ բարձրութենէ ընդարձակ տեսարան մը կը պարզի աչքիդ տռել՝ քաղաքին և չըր ջաբոլորը եղած լեռն և ապառած լեռանց, որ իբրու ամուր պարիսպ մը կ'ամրացնեն Հայաստանի արեւելեան ծայրին լեռնադաշտը՝ ուր կ'ընթանայ Երասխա :

Նուիրական գերեզմանին մեր ուխտը կատարած ատեննիս³, ի մայրն խոնարհող արեգական ճառագայթք ծիրանեզոյն կը ներկեն ազնիւ խեցեղէններով (faïences) ազուցիկ՝ խաներու գեղեցիկ աշտարակը, և աւելրակ մեծ դրան մը երկու գիւն բարձրացած կրկին միմիայք կիսաւեր կը յափշտակեն մեր աչքերը դէպ ի կապոյտ և անամպ երկնքին անհուն ընդարձակութիւնը. և այդ մոգիչ ճառագայթից ազգեցութեամբ՝ չորս կողմի և զաշտէն անդին գտնուող լեռինք՝ այնչափ հրաշալի և նորահրաշ գունագեղ կերպարանք մը կ'առնուն՝ որ անկարելի է նկարագրել :


Դժբաղդաբար խիստ սակաւատեւ է այս հրաշալի տեսարանն. վասն զի անակնկալ ա-

պետին նշխարաց : Գերեզմանին յատակը ծածկուած է լայտերաց կտորուանքներով և գրեթէ բոլորովն սեւացած հարապատած երեքերով : Սիւնիս Տեղագրութիւն յ'էջ 303 :

3. Նոյի գերեզմանն յիշելէն վերջը կրնար յիշուի նաև անոր որդւոց գերեզմանն, որ այնչափ նեղու չէ իրենց չոր գերեզմանէն :

A detailed black and white engraving of a landscape. On the left, a large, ornate, domed structure, possibly a tomb or a temple, stands prominently. It features intricate carvings and a small arched entrance. In the center, a stone wall with a gate runs across the middle ground. To the right of the wall, a large, rectangular structure, possibly a building or a monument, is visible. The background shows a valley with hills and a small town or village. The entire scene is framed by a decorative border.

բազուկներով գիշեր կը յաջորդէ օրուան, և լուսին իսկ և իսկ պայծառ կը փայլի՝ մինչ աստեղք տակաւին իրենց առաջին լոյսը կը ցոլացնեն։ Կամաց կամաց կը սկսինք մենք այլ յառաջ երթալ ի տուն բռնելին՝ զողջողալով գիշերուան հողմոյն զովութենէն, որ մեծապէս զգալի էր օրուան երեկոյանալէն յետոյ։



Գերեզման Նոյի.

Յունիս 22. Լուսադրական հանդերձանքն մեր հետն՝ մասամբ յարկածածուկ ու խիստ բանուկ վաճառանոցէն կ'անցնինք։ Բազմութիւն երկվարաց և շորեաց բեռնաւորք կ'անցնին նեղ փողոցաց միջէն, փոշեաց ամպեր բարձրացնելով։ Իշուկներու խումբք անդալ դար կ'երթան ու կը դառնան՝ մտերի գըտուող աղահանքէն, որ Կողբայ աղահանքին հաւասար հին ատեններէ ի վեր կը լահալ գործուի։ զետնոյն տակ գտուած քարեայ գործիքներէն կ'ենթադրուի, թէ նախապառն մական ժամանակներէ կու գային հին ի խնդիր և ի գիւտ աղի։ Յաջորդելով վազվորդ այդ իշոց խմբին կը հետեւին ուղտերու կառուանք հանդարտ ու ծանր քայլերով և ծառանց աղմուկի։ Միայն վզերնէն կախուած զանազակք կ'իմացնեն իրենց ներկայութիւնը, և ժամանակ կու տան մեզ նեղ փողոցաց մէջ պատապարտելու անկիւն մը գտնել, որպէս զի չըլլայ թէ իրենց վերցուցած բեռներուն տակ հզմուկիք։

Կրպակաց մէջ ամէն կողմ կը վիտան դէզք ծիրանի, սալորի, կեռասի, ոսկեգոյն և կարմիր, քաղցրաճաշակք և հաճոյատեսիլ, վաճառանոցին զարդք և գեղեցկութիւն։ Համեղ պտղոցս քով ի վաճառ դրուած են՝ կապտա, գոյն գեղեցիկ ընդունարաններու մէջ, պանիր, կարապ, սեր և ուրիշ մեզի համար անբացատրելի կամ անունը չունեցող վաճառք։ Եւ տեսնենք դարձեալ լեբան պէս դիզուած շերամի բոժոժք՝ սպիտակք և դեղին, տարուանս նոր բերքը։

Ոմանք ի վաճառականս՝ պարսկական կապերտից վերայ նստած իրենց ճաշը կ'ընեն ուրիշ ամէն բանի մէջ իրենց սովորական ծանրութեամբ։ Սառի պալարն ալ իրենց քովն է, որովհետեւ ամէնքն լուրը ստուով կը խմեն։

Նեղ ու մթին փողոցաց մէջ խոնուած է բազմութիւն մարդկանց և կառաց, յորս կը տեսնուին բազմեալ երկու կամ երեք թաթաք սպիտակազգեստք որ կ'երթան ի բաղանիս։ Քիչ մ'անդին, արեգական պայծառ լուսով մը ծանրաքայլ կը յառաջնան սէյէտք՝ մեծ շարժումներով իրարու հետ խօսելով դէպ ի մզկիթն՝ ուր աղօթելու կ'երթան։

Նախիջևանի զխաւոր ճարտարութիւնն կայանայ թաղեաց ու կապերտից շինութեան և պատրաստութեան վերայ։ Ոթոցայ կամ պատերու ծածկութի տեղ գործածելու համար դիպակէ բանուածք մ'այլ ունին, զոր տեղադրիք օճեթին կը կոչեն։

Խաներու հին աշտարակն և Նախիջևանի երեքմն սմենումեծ մզկիթը լուսազրելու զընացած ժամանակ, մսխմանի տան մը գիմալէն անցանք, ուստի ողբոց և արտասուաց ցաւազին ծայներ կը լուռէին։ Չարմաղած՝ կանգ առինք, և ցոյց տուին մեզ ներքին սըրահ մը՝ ուր խումբ մը ողբանուագ կանանց դադաղի մը շուրջը նստած կ'արտասուէին։ Տանուտէն էր մեռնողն՝ զոր գրացի և իրեն պէս թաթաք մը բռնանալէ սպական էր, աննշան՝ բայց իրենց համար խիստ ծանր, ջրոյ մը խնդրոյ պատճառաւ անհամաձայն գտուելով՝ դաշտաց ոռոգման համար և մէկը շատ լուր յատկացնելով իրեն ի վնաս միւսոյն, գնդակ մը խնդրոյն վերջ տուեր էր։


Հարուստ Հայ մը հրաւիրեց զմեզ ի ճաշ՝ քաղաքին յորս բոլորը ունեցած ամարաստանի մը մէջ. ուր կ'երթանք խմբովին մեր հետն ունենալով Թումանով իշխանն ու իշխանուհին և իրենց որդիքը, զՊարապիթի թիչի և գուստրը, ու քանի մը հայ և ուս երիտասարդ և շնորհազեղ ընտանիք՝ որ մեր պատուոյն տրուած ճաշին մասնակցելու հրաւերք ընդունած էին։

Դժուարագինաց և անհարթ ճամբաներով

Հասանք ի պարտէզն, որոյ բուսականութիւնն աղ կատարեալ անկանոն անման գիւղքի մէջ էր. և ուր երկար սեղան մը դրուած էր յիշատակի արժանաւոր մեծութիւն ունեցող հայապանո կամ նորչոնոս կոչուած ծառոյն հո- վանատուներին ներքեւ: Չարմանալի ծառ մ'է նորչոնոս. կնձնի տեսակ մը, և տերեւներն հովանոցաձև բացուած և այնչափ խիտ որ արեգական հառազայթից անկարելի է ներս թափանցիլ. և առաւելապէս կը գտնուի ի հարաւակողմանս ռուսահայաստանի, և խիտ շուտ կ'ածի: Իր քաղցրախորժ հովանոյն ներքեւ օղոյ զաւաթիկները (ի հարկէ էրիկ մարգիկ միայն) պարպելէն և ցաքոսքի նա- խաճաշը ընելէն յետոյ, յարձրկեցանք ա- սիական կարգաւորութեամբ և համադամ կե- րակրօք պատրաստուած ճաշուն վերայ:

Սենէն առաջ պղպեղով առատաբար հա- մեմուած համեղ խորոված քեպուս մը հրամ- ցուեցաւ. յետոյ հոյակապ փիլաւ մը կեռասի անուշով, ապա սեր (քայմաք) և ամենառատ պտուղք. և թէպէտ ներկայացուած պնակաց յաղորդութեան կարգը խառնախնդր, բայց առանց իրեն համեղութեան և ոչ քաղցրա- ճաշակ վայելից մնաս մը բերելու:

Երբ մեզմէ իւրաքանչիւրն բարձրաձայն ծի- ծաղով մատուրները կը խոթէ ձիւնակերպիկ փիլաթի սկաւառակին մէջ, Գէորգ մօտի ան- տառակին մէջ ծածկուած՝ իր գիտցած կեր- պովը այգերգի մը հանդը կ'ուզէ ընծայել բազմակնանաց, ու եղեգէ սրնգով մը դաշնա- կաւոր նուաղկոտ եղանակներ կը նուազէ, սիրող դշխոյի մը գանգաւորներն՝ ինչպէս կը կարծուի տողացիներէն: Ինչ այլ ըլլայ, պզտի



Փերեցման որդոց Նոյի.

հանճար մը կը թուի ինչ Գէորգ, և յարգը չափով մը կ'առաւելու մտքիս մէջ. յարմարու- թիւն ունեցող մէկը, բայց երկչոտ բնաւորու- թիւնն չի համարձակիր ցոյցն ընել:

Խորաթիկէն ետքը իւրաքանչիւր ոք կ'եր- կըննայ խոտերու վերայ փռուած գեղեցիկ կապերտից օրայ, հանդսական կերպով մը անցընելու սրուան ջրմը ժամը: Բայց ա- կարելի է քիչ մը հանգչիլ քնով, որովհետեւ քաղաքը հասնելունէս ի վեր՝ առաւօտէն մինչ իրիկուն սոսկալի ու ակամօ խլցընող աղաղակ մը տիրած է ամեն կողմ. վասն զի բիւրք տարմահաւուց և ճնճղկանց թափուած են պտղատու ծառոց պարտէզներն՝ սպառել ջրն- ջը: Լահուեցած կեռասի պտուղներն, Այս աւարող թռչուններն փախցընելու և ծառոց պտուղներն փրկելու ուրիշ հնարք մը գտած

չեն բնակիչքն, բայց եթէ անտարակոյս այս հանճարից գիւտը՝ արեգական ծագելուն հետ բարձրաղաղակներով լեցընել իրենց պարտեզ- ները, ու հրացանաց արձակմամբ և ուրիշ ուր և իցէ կերպով վախցընել թռչուններն, որ միանգամայն ահաբեկիչ է քաղաքին այ- ցելութեան ելլող այն ճանապարհորդաց հա- մար՝ որ այսպիսի տարօրինակ սովորութեան մը պատճառաց անսեղեակ են:

Արեւմտախն՝ իշխանին ու բռնիկին հետ կ'երթանք առ Ռահիմ-խան որ թէյի հրաւի- րած էր զմեզ. ինքն է խաներու հին աշտա- րակին արդի տէրը, որ կը բարձրանայ իր ի Նախջեւան ունեցած քաղաքին ամենէն գե- ղեցիկ տան քով. իշխանական բնակարան մը, ի հանդիպող վանդակապատ և խնամքով զարդարուած պարտիզով մը: Խանը՝ որ կը

սպասէր մեզ, դռնէն կ'ընդունի եւ անցողաբար ցոյց կու տայ իր ախոռներն, ուր կը խալտան դեռ նոր բռնուած վայրի այծերը:

Գրեթէ քառասնամեայ անձ մ'է մեր ասպընթականն. ռուս սպայից համազգեստը կը կրէ, ու Բէքժան-խանին նման մեծ հարստութեան տէր, շարժալի գրիզից եւ կարուածոց տէրն ըլլալով: Կը հասկընայ ու կը խօսի գաղղիարէն լեզուն. ինչպէս ընդհանրապէս Ռուսաց ամեն սպայակոյտը: Զօրավարի աստիճան ունէր հայրը եւ մարման ազնուականութեան պետ: Այլեւայլ սենեակներէ անցընելով, կ'առաջնորդէ սպայկիներով յարկածածուկ մեծ սրահ մը. քիչ ետքը՝ երբ հասանք յիշեալն, Սարդարաց պալատին մէջ տեսայ այն նախագաղափարը՝ զոր իրեն օրինակ առած էր Ռահիմ—խան տանը շինութեան: Ասիական այս հոյակապ սրահը՝ մէկ կողմէն պարտիզին վերայ տեղ ունէր, իսկ ի միւսմէն՝ գունաւոր

սպայկիներով զոցուած, որ կը հանեն ի փայտեայ պատշգամբ, ճիշդ ի հանդիպող Արարծաթ լերին: Հրաշագեղ օթոցք, պարսկական ամենարուեստ կապերաք եւ գորգք կը համաձայնին գեղեցիկ սպայկիներով եւ նկարու ի գեղազարդել թէ՛ բարձրութեամբն եւ թէ՛ ընդարձակութեամբ նշանաւոր այս սրահը, ուր եւրոպական ճարտարութիւնք փոքու իւրիչ չեն մնասեր հոն ամեն մանրամասնութեամբն իշխող արեւելեան ախորժակին ներդաշնակութեան:

Խանը, ճանչցող ու սիրով ցոյց կու տայ մեզ տանը մէջ գտնուած արուեստական ճոխութիւնները. եւ մասնաւոր կերպով՝ ճենա, կան ընտիր յախճապակիներն որ խաներու հին պալատին վրայ նոր շէնքին հիմունքը փոխելու ժամանակ գտնուած են. եւ քանի մը նմոյշ՝ յիշատակի համար կը նուիրէ ինձ....

(Շարայարեղի).

ԱՐՈՒՍԱՅԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



(Տես յէջ 130)

Ա. Յառաջարանի մէջ յիշուեցաւ այս պատմութեան ձեռագրին սկզբան պակասութիւնը. հիմնական եղածին առաջին երեան այլ քիչ մի մաշած եւ դժուար կարդալի է. ասկէց թուի սխալ թուական կամ քանի մի բառ պակաս, որով շփոթի ըստն. որ է այսպէս:

« Սկսիմք օգնութեամբ եւ առաջնորդել »
 « Թեամբ Աստուծոյ, Մեր ժամանակս, այս »
 « ինքն ի սկզբն 564 տարւոյ (հիճր. որ է »
 « հոկտ. 1168—1169 սեպտ. թուին Քրիստոսի, եղաւ վերաշինութիւն (Հայոց) Ս. »
 « Յակոբ կոչուած եկեղեցոյն, որ Եգիպտոսի »
 « տոսի Ալլախտան կոչուած վիճակին մէջն է, »
 « բլրոց մօտ »:

Բնագիրն Ալ-Պասադին الجاساڤا յոգնակի գրէ՝ ուրիշ տեղ Ալ-Պասադան ըսածը, որ է այգի, պարտէզ, պահէզ, ե Քահէրէ մայրաքաղաքէն քանի մի մղոն միայն հեռու է յարեւելեան հարաւային կողմն: Տեղն ստոյգ, ըսած թուականն կամ վերաշինութիւնն սխալ. վասն զի ի յիշեալ թուականին՝ վանքն ոչ թէ շինուեցաւ՝ այլ աւրուեցաւ կամ աւմայացաւ, ինչպէս քիչ մի վերջը պիտի ըսէ

ինքն պատմիչն. ապա թուի թէ այս տեղ աւրուելը յիշելով մէկ բառիւ՝ առաջին շինութիւնն այլ ուզեք էր յիշել, ե երկու դիւպտածն յիրար խառնուեր է:

« Այս եղաւ.... Էմիրին ատեն, որ կա՛ »
 « ռալարէր զԵգիպտոս, շնորհիւ Սուլտանին. »
 « ե բարեկամ էր ամէն քրիստոնէից, թէ »
 « մեծամեծաց թէ՛ ռամկաց: »

Անուն Էմիրին պակսի ի ձեռագրին, բայց յետոյ յիշածն յայտնաւի, որ Մուսղանգիր խալիֆէի հաջորդի վերապահն էր, Պատր ալ-Ճալիլ կոչուած, ե շատ անգամ Էմիր ալ-Շիւյիշ, յայսինքն՝ جلال شجره Զոհապետ. յիշուի նա եւ ուրիշ պատմուոյ անուամբք այլ, իբր գար մի յառաջ քան զվերոյիշեալ թուականն, այսինքն ԺԱ. դարու վերջին քառորդին, Հայոց նոր գաղթական բերելով բազմացող յէգիպտոս. համազգիան իբրեւ 30,000 տուն. գոնէ 10,000, ինչպէս գրէ Ն. Ենոր. հալւոյ հմուտ կենսագիրն. ասոնց յատուկ եւ պիսկոպոս այլ ձեռնադրեց մեծ կաթողիկոսն Գրիգոր Վկայասեր, անձամբ գալով յԵգիպտոս, ինչպէս պիտի վկայէ ե մեր պատմիչն: